ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/37

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչներ

Գ. Մուրադյանի (լիազորագիր տրված՝ 30.04.2020թ.),

Գ. Ոստանիկյանի (լիազորագիր տրված՝ 30.04.2020թ.),

«ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Թիրաբյանի (պետական գրանցման համար՝ 67.110.1059689),

«ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ս. Գրիգորյանի (լիազորագիր տրված՝ 04.05.2020թ.),

«Գավառտրանս» ՍՊԸ-ի տնօրեն

Հ. Գուլաբյանի (պետական գրանցման համար՝ 25.110.00923),

«Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ս. Ջաբաղյանի (լիազորագիր տրված՝ 30.04.2020թ.),

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ. ներկայացված և 16.04.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 15.04.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանը ս/թ. մարտի 6-ին բաց մրցույթի ընթացակարգով հրապարակել է մրցույթ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման համար: Մրցույթի 1-ին չափաբաժնում կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներներների տեխնիկական բնութագրում նշված է.

Ծավալը	1,0 – 1,1 մ3
Երկարությունը մմ	1375 +/- 5%
Խորությունը, մմ	1075 +/-5%
Բարձրությունը, մմ	1360 +/-5%
Քաշը, կգ	ոչ պակաս 45
Բեռնատարողությունը, կգ	ոչ պակաս 450
Գույնը	մուգ կանաչ
Անիվների տրամագիծը՝	200մմ

Կոնտեյների նկարագրությունը

Նյութը՝ բարձր խտայնության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն, համաձայն EN 840 միջազգային ստանդարտի: Աղբարկղը տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության - 200մմ տրամագծով: Անվադողերը /անիվները/ պետք է ունենան

փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ:

Աղբարկղը պետք է լինի.

- Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից.
- դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց.
- ճկուն.
- Հրդեհակայուն /չբոցավառվող/
- հարվածակայուն.

տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան:

Վերևի մասում պետք է ունենա ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող կափարիչ, իսկ կողքերի մասում աղբատար մեքենայի միջոցով բարձրացման և բեռնաթափման հնարավորություն, որոնք ամրացված են կաղապարին մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Աղբարկղի աջ և ձախ կողմերում պետք է լինեն երկուական բռնակներ:

Աղբարկղերը պետք է ունենան համարակալում, որը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ և ծխախոտը աղբարկղ գցելն արգելող զգուշացում:

Առաջարկվող ապրանքները պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:

<u>Բեռնման եղանակը</u>

Հետևից բեռնաթափմամբ աղբատարների համար

<u>Երաշխիքային ժամկետ</u>

Կենցաղային թափոնների կոնտեյների՝ ներառյալ բաղադրիչների համար - ոչ պակաս, քան մեկ տարի:

Առաջարկում ենք կոնտեյների նմուշը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ ասառաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:

Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:

Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին,

- պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:
- Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:
- Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:

Ելնելով վերը նշված բնութագրից՝ հայտնում ենք, որ համաձայն EN 840 սերտիֆիկատի բեռնատարողությունը ֆիքսված 440կգ է, իսկ հրավերում նշված է ոչ պակաս 450կգ, ուստի արդեն իսկ բնութագրին չի կարող համապատասխանել:

Հրդեհակայուն /չբոցավառվող/ պահանջի վերաբերյալ՝ պոլիէթիլենային կոնստրուկցիան չի կարող լինել հրդեհակայուն:

Հարվածային պահանջի վերաբերյալ՝ նշված չէ հարվածի ուժգնության չափը:

Փորձաքննության պահանջի և եզրակացության պահանջի վերաբերյալ՝ այս կետը չի կարող պահպանվել միայն այն պատճառով, որ ՀՀ-ի տարածքում չկան նման փորձաքննություն կատարող կառույցներ, որոնք կարող են եզրակացություն տալ ապահովելով հրավերի բնութագրով նշված բոլոր կետերը: Բազմիցս հետաքրքրվել ենք, դիմել տարբեր փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների, ունենք նրանցից մեկի պաշտոնական եզրակացությունը հնարավոր կետերի պահանջի վերաբերյալ:

Մի քանի մասնակիցներ պահանջել են պարզաբաումներ, որոնց պատասխանները սպառիչ չեն և չի կատարվել բնութագրի փոփոխություն և հստակեցում:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերի գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվույմ է տվյալ գնումը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է, համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի, պարտավորեցնել հանձնաժողովին՝ դադարեցնելու և կամ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, և մրցույթի վերահայտարարվելու դեպքում՝ պահպանվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.05.2020թ.՝ ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

<u>2. «Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գավառտրանս» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ, ներգրավվել է ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքով՝ որպես երրորդ կողմ:

«Գավառտրանս» ՍՊԸ-ն 04.05.2020թ. ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

« 1. Նախապատմություն.

1.1 «Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով 06.03.2020թ. հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ)

բաց մրցույթի հրավեր (հետայսու նաև՝ Հրավեր), որին, ի թիվս այլոց, մասնակցության հայտ է ներկայացրել «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն:

1.2 Հայտերի բացման օրը՝ 16.04.2020 թ.-ին տեղեկագրում հրապարակվել է «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Բողոք բերող) կողմից 15.04.2020թ.-ին՝ հայտերի բացումից մեկ օր առաջ, բողոք (հետայսու՝ նաև Բողոք) ներկայացնելու վերաբերյալ հայտարարություն, որի արդյունքում թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 գնման ընթացակարգը կասեցվել է:

1.3 Բողոք բերողը գտել է, որ Հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումները սպառիչ չեն, չի կատարվել բնութագրի փոփոխություն և հստակեցում և խնդրել է. «պարտավորեցնել հանձնաժողովին դադարեցնելու կամ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը և մրցույթի վերահայտարարվելու դեպքում պահպանվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը»:

1.4 Ուսումնասիրելով ներկայացվածը՝ գտնում ենք, որ Բողոքն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

2.Հիմնավորումներ

2.1 Բողոքում՝ հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրի մեջբերումից հետո՝ Բողոք բերողը նշել է. «Ելնելով վերը նշված բնութագրից հայտնում ենք, որ համաձայն EN 840 սերտիֆիկատի բեռնատարողությունը ֆիքսված 440 կգ է, իսկ հրավերում նշված է ոչ պակաս 450կգ, ուստի արդեն իսկ բնութագրին չի կարող համապատասխանել»:

Բողոք բերողը որևէ ապացույց կամ հիմնավորում չի ներկայացրել առ այն, որ «համաձայն EN 840 սերտիֆիկատի բեռնատարողությունը ֆիքսված 440 կգ է»:

Թափոնների և վերամշակման արկղերի որակի գերմանական ասոցիացիայի (GGAWB) կողմից հրապարակված RAL-GZ 951/1 սերտիֆիկացման ուղեցույցում (https://-www.ggawb.de/fileadmin/user_upload/downloads/Anwendungsrichtlinien_Abfall_Wertstoffbehaelter_GGAWB_e.pdf) նշվում է. «Համաձայն DIN EN 840-ի, թույլատրելի համախառն քաշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ թափոնների խտություն 0,4 [կգ/դմ^3] x նոմինալ ծավալը, գումարած աղբարկղի քաշը: Սովորական կենցաղային թափոններով բեռնարկղը լցնելը սովորաբար չի հանգեցնում առավելագույն թույլատրելի քաշի գերազանցման: Այնուամենայնիվ, առավելագույն թույլատրելի համախառն քաշը հնարավոր է գերազանցել այն դեպքում, երբ բեռնարկղը ամբողջությամբ լցված է

շինարարական թափոններով, սննդի թափոններով կամ նմանատիպ նյութերով, որոնք ունեն բարձր հատուկ խտություն»:

Այսպիսով, համաձայն EN 840 ստանդարտի՝ 1000 և 1100 լիտր ծավալային տարողունակություն ունեցող աղբարկղերի նվազագույն բեռնատարողությունը պետք է կազմի համապատասխանաբար 400կգ և 440կգ: Ակնհայտ է, որ գնումների պայմաններով կարող է նախատեսվել նման EN 840 ստանդարտով սահմանված նվազագույն շեմը գերազանցող չափանիշ: Ակնհայտ է նաև այն, որ գնումների ընթացակարգով սահմանված բեռնատարողության նման ավելի բարձ չափանիշին համապատասխանող աղբարկղը կհամապատասխանի նաև ստանդարտով սահմանված բեռնատարողության չափանիշին:

Ուղեցույցում նշված է, մինչև 1100 լիտր ծավալային տարողունակություն ունեցող աղբարկղերի համար առավելագույն բեռնված քաշը սահմանված է համապատասխանաբար 510կգ-ի չափով: Հաշվի առնելով այն, որ գնումների ընթացակարգով պահանջվում է, որ աղբարկղի դատարկ քաշը լինի 45կգ-ից ոչ պակաս իսկ տարողությունը 450կգ ոչ պակաս, ակնհայտ է, որ գնումների ընթացակարգով սահմանված վերը նշված պահանջներին՝ բեռնատարողության և դատարկ քաշի առումով կհամապատասխանեն բոլոր այն աղբարկղերը, որոնք ունեն 450կգ-ից (510-45)=465կգ բեռնատարողություն, և համապատասխանաբար (510-450)=60կգ-ից 45կգ դատարկ քաշ:

Տեխնիկական բնութագրով մի քանի ստանդարտի համապատասխանության պահանջ է ներկայացված և դրանք չենք կարող դիտարկվել առանձին, քանի որ դրանց համակցությունն ապահովելու դեպքում միայն կարելի է եզրակացնել ապրանքի համապատասխան որակի առկայության մասին: Ի դեպ, RAL-GZ ստանդարտին համապատասխանությունը ենթադրում է նաև EN 840 ստանդարտին և ISO 9001 ստանդարտին համապատասխանություն (տե՛ս Թափոնների և վերամշակման տարաների որակի հսկողության ասոցիացիայի պաշտոնական կայքը https://www.ggawb.de/en/):

RAL-GZ որակի սերտիֆիկատ տրամադրվում է տարբեր բեռնատարողությամբ աղբարկղերի համար: Եվ տվյալ պարագայում Պատվիրատուի իրավունքն է սահմանել, թե իր կարիքների բավարարման համար կոնկրետ պարագայում ինչպիսի հատկություններ, ցուցանիշներ, այդ թվում՝ տարողություն և դատարկ քաշ, պետք է ունենա ապրանքը:

2.2 Բողոքում նշված է. «Հրդեհակայուն /չբոցավառվող/ պահանջի վերաբերյալ՝ պոլիէթիլենային կոնստրուկցիան չի կարող լինել հրդեհակայուն»:

«Հարվածակայուն պահանջի վերաբերյալ՝ նշված չէ հարվածի ուժգնության չափը»:

«Հրդեհակայուն», «չբոցավառվող», «հարվածակայուն» հասկացությունները լայնորեն կիրառվում են տարբեր ոլորտներում: Այդպես, օրինակ՝ պոլիէթիլենային նյութի չբոցավառվող լինելու հատկանիշ սահմանված է ՀՀ կառավարության 28.10.2009 թ. թիվ 1213-Ա որոշման հավելվածով. «Չբոցավառվող պոլիէթիլենային մեկուսացմամբ ու պոլիվինիլքլորային ծածկույթով 15 ԿՎ բարձր լարման զրահապատ մալուխ՝ խաչաձև միացումների համար»:

Ավելին, տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 8-ի թիվ 1 որոշմամբ հաստատված պարզաբանմամբ հստակորեն նշված է, որ եթե առաջարկվող ապրանքը արտադրվել է վերոհիշյալ ստանդարտներին համապատասխան և EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատները տրվել են առաջարկվող ապրանքի համար, ապա այն ներառում է բնութագրում նշված չափանիշները և պետք է եզրակացնել, որ ապրանքը համապատասխանում է նաև վերը նշված բոլոր պահանջներին, այդ թվում՝ չբոցավառվող և հարվածակայուն լինելու պահանջին:

Ընդ որում, նշվածն առանց որևէ պարզաբանման, հստակորեն հասկանալի է նաև տեխնիկական բնութագրի շարադրանքից, քանի որ կետերով հերթով թվարկված են տարբեր պահանջներ («կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից, դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց, ճկուն, հրդեհակայուն /չբոցավառվող/, հարվածակայուն»), իսկ վերջում նշված է «տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան»: Այսինքն, աղբարկղերը պետք է համապատասխանեն թվարկված պահանջներին համաձայն EN 840, RAL-GZ և ISO 9001 ստանդարտներին:

2.3 Բողոքում նշված է. «Փորձաքննության պահանջի և եզրակացության պահանջի վերաբերյալ՝ այս կետը չի կարող պահպանվել միայն այն պատճառով, որ ՀՀ տարածքում չկան նման փորձաքննություն կատարող կառույցներ, որոնք կարող են եզրակացություն տալ ապահովելով հրավերի բնութագրով նշված բոլոր կետերը: Բազմիցս հետաքրքրվել ենք, դիմել տարբեր փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների, ունենք նրանցից մեկի պաշտոնական եզրակացությունը հնարավոր կետերի պահանջի վերաբերյալ»:

Փորձաքննության և եզրակացության պահանջի կատարումը իրականում հնարավոր է ապահովել: Բողոք բերողը ինքն է իր գործողություններով միտումնավոր անհնարին դարձրել իրեն նման եզրակացության տրամադրումը, քանի որ չի տրամադրել փորձաքննության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Բողոքին կից ներկայացված ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 06.03.2020թ. տրված N24-0024Պ Փորձագետի եզրակացության «Ծանոթություն» հատվածում նշված է, որ «...համալիր փորձաքննության շրջանակներում հնարավոր չի եղել պարզել հետազոտելի օբյեկտի այնպիսի ցուցանիշները, ինչպիսիք են արտադրանքի ուլտրամանուշակագույն ճառագայթների, ցրտի և տաքի նկատմամբ կայունությունը և բեռնատարողությունը՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում անհրաժեշտ հետազոտական հնարավորությունների բացակայության պատճառով: Ինչ վերաբերում է արտադրանքի անձնագրին, EN-840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին, ապա վերջիններս փորձաքննությանը չեն տրամադրվել»:

EN-840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատները փորձագետներին տրամադրելու դեպքում փորձագետները կարող էին միայն նշված փաստաթղթերի ուսումնասիրման և աղբարկղերի նույնականացման (փաստաթղթերը այդ աղբարկղին վերաբերելու փաստի հաստատման) արդյունքում տալ եզրակացություն, որ տվյալ աղբարկղերը համապատասխանում են տեխնիկական բնութագրի պահանջներին:

Նշված պնդումը վերահաստատվում է նաև տեխնիկական բնութագրերի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումներով:

2.4 Առհասարակ, որակի համապատասխանության սերտիֆիկատների առկայության դեպքում, եթե չի վիճարկվում սերտիֆիկատի տրամադրման հիմքերի (կատարված փորձարկումների) արժանահավատությունը, ապա պարտադիր չէ կրկնակի ամբողջական փորձարկումներ կատարել՝ պարզելու համար այն ցուցանիշների առկայությունը, որոնք արդեն իսկ հավաստվում են տվյալ սերտիֆիկատով: Այլ հարց է, որ որոշ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ մասնագիտական ուսումնասիրության կատարմամբ նույնականացնել, որ սերտիֆիկատը վերաբերում է կոնկրետ ապրանքին, և որ սերտիֆիկատը տրված է այն տալու լիազորություն ունեցող մարմնի կողմից:

Հատկանշական է, որ Բողոքը ներկայացվել է Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի այլ մասնակիցների ներկայացրած հարցումներին տրված պարզաբանումների

հրապարակումից հետո, մինչդեռ դրանցով կարծում ենք արդեն իսկ հերքվում են Բողոքում բարձրացված հարցերը:

ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 06.03.2020թ. N20-0024Պ «Փորձագետի եզրակացություն»-ը Բողոք բերողին ուղարկվել է դեռևս 06.03.2020թ.-ին, իսկ Բողոքը ներկայացվել է 15.04.2020թ.-ին՝ հայտերի ներկայացման վերջին օրը, ինչը կարծում ենք նպատակ է հետապնդում ձգձգել Ընթացակարգը:

2.5 Բողոք բերողը խնդրել է պարտավորեցնել հանձնաժողովին դադարեցնել կամ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը և մրցույթի վերահայտարարվելու դեպքում պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը:

Գնման ընթացակարգը «դադարեցնելու» պահանջն իրավաչափ չէ, քանի որ Օրենքը գնման ընթացակարգի դադարեցման (ընդ որում՝ ժամանակավոր) ինստիտուտ նախատեսում է միայն 15-րդ հոդվածի 5-րդ մասով, որը վերաբերում է այն դեպքին, երբ գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, և, միաժամանակ, կնքվում է պայմանագիր:

Գնման ընթացակարգը «չկայացած հայտարարելու» պահանջը նույնպես իրավաչափ չէ, քանի որ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու սպառիչ ցանկը սահմանված է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում: Դրանք են.

«Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում»:

Ակնհայտ է, որ Ընթացակարգում առկա չէ մեջբերված հոդվածով սահմանված չկայացած հայտարարելու հիմքերից որևէ մեկը:

Մրցույթի վերահայտարարվելու դեպքում Հանձնաժողովին Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը պահպանելուն պարտավորեցնելու վերաբերյալ Բողոք բերողի խնդրանքի վերաբերյալ հարկ է նշել, որ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Գնման առարկայի բնութագրերը՝

1)պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2)չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3)պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.»:

Ինչ վերաբերում է նշված հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերին, ապա Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել թվով 3 ընկերություններ՝ «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն, «ԳՈԼԴ-ՖԼՈՒՐ» ՍՊԸ-ն և «ԻՆՇՈՒՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, ինչը վկայում է այն մասին, որ առկա են մրցակցության հավասար պայմաններ:

Միաժամանակ, գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտ չի կարող համարվել այն, որ որևէ պոտենցիալ մասնակցի չի հաջողվում առաջարկել սահմանված պահանջներին համապատասխանող ապրանք:

Ավելին, Բնութագրում ձեռք բերվող ապրանքի համար բարձր որակական չափանիշների համապատասխանելու պահանջներ սահմանելը՝ տվյալ դեպքում՝ EN 840, RAL-GZ և ISO 9001 ստանդարտներին համապատասխանելու պահանջը, չի կարող մեկնաբանվել որպես Բնութագրի՝ գնումը կատարելու կարիքին օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինելու պահանջի խախտում:

Այդ առումով հարկ ենք համարում նշել, որ հանրային գնումների մասին Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի թիվ 2014/14/EU հանձնարարականի վերաբերյալ Թափոնների և վերամշակման տարրաների որակի հսկողության ասոցիացիայի տված մասնագիտական իրավաբանական կարծիքի համաձայն՝ RAL-GZ որակի սերտիֆիկատը կարող է պահանջվել հանրային գնումների ընթացակարգերում (տե՛ս https://www.-gawb.de/fileadmin/user_upload/downloads/ggawb_ral_vergaberecht_gutachten_en.pdf):

Հետևաբար, Բնութագրում ամբողջովին պահպանված են Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ներկայացված բողոքը:

«Գավառտրանս» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.05.2020թ.՝ ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է

իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.04.2020թ. թիվ 02/61-37914h գրությամբ հայտնել է հետևյալը դիրքորոշումը.

«Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 16.04.2020 թվականի՝ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ բողոքաբեր) 15.04.2020 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Գտնում ենք, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով:

Բողոքի 1-ին կետով բողոքաբերը նշել է, որ համաձայն EN 840 սերտիֆիկատի բեռնատարողությունը ֆիքսված 440 կգ. է, իսկ հրավերում նշված է ոչ պակաս 450կգ., ուստի արդեն իսկ բնութագրին չի կարող համապատասխանել, սակայն վերջինիս կողմից որևէ ապացույց չի ներկայացվել այն մասին, որ EN 840 սերտիֆիկատը տրվում է միայն 440 կգ. ապրանքի համար:

Ավելին՝ Երևանի քաղաքապետարանի կողմից մինչև գնման ընթացակարգի հայտարարումը համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել տարբեր արտադրողների կողմից առաջարկվող ապրանքատեսակի բնութագրերի վերաբերյալ, որոնց արդյունքում պարզվել է, որ բազմաթիվ են EN 840 սերտիֆիկատին համապատասխանող, սակայն 450 կիլոգրամից բարձր բեռնատարողություն ունեցող ապրանքներ /կից տրամադրվում է կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ նյութերը/:

Միաժամանակ՝ հրավերով հստակ սահմանված է հետևյալը.

Ծավալը	1,0 – 1,1 մ3
Երկարությունը մմ	1375 +/- 5%
Խորությունը, մմ	1075 +/-5%
Բարձրությունը, մմ	1360 +/-5%

Քաշը, կգ	ոչ պակաս 45
Բեռնատարողությունը, կգ	ոչ պակաս 450
Գույնը	մուգ կանաչ
Անիվների տրամագիծը՝	200մմ

Կոնտեյների նկարագրությունը

Նյութը՝ բարձր խտայնության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն, համաձայն EN 840 միջազգային ստանդարտի: Աղբարկղը տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության - 200 մմ տրամագծով: Անվադողերը /անիվները/ պետք է ունենան փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ:

Աղբարկղը պետք է լինի.

Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից.

դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց.

ճկուն.

Հրդեհակայուն /չբոցավառվող/

հարվածակայուն.

տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան:

Այսինքն, եթե առաջարկվող ապրանքը արտադրվել է վերոհիշյալ ստանդարտներին համապատասխանան և վերոհիշյալ սերտիֆիկատները տրվել են առաջարկվող ապրանքի համար, հետևաբար այն ներառում է նաև վերոհիշյալ չափանիշները, որի վերաբերյալ պատվիրատուի կողմից տրվել է համապատասխան պարզաբանում:

Բողոքաբերի կողմից նշված այն պնդմանը, որ պոլիէթիլենային կոնստրուկցիան չի կարող լինել հրհեհակայուն և որ նշված չէ հարվածի ուժգնության չափը, ապա՝ պատվիրատուի կողմից տրված պարզաբանմամբ հստակ նշվել է, որ եթե առաջարկվող ապրանքը արտադրվել է վերոհիշյալ ստանդարտներին համապատասխանան և վերոհիշյալ սերտիֆիկատները տրվել են առաջարկվող ապրանքի համար, հետևաբար այն ներառում է նաև վերոհիշյալ չափանիշները:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից նշված այն պնդմանը, որ պատվիրատուի կողմից սահմանված ապրանքը ՀՀ պետական փորձաքննության հնարավոր չէ ենթարկել այն հիմնավորմամբ, որ ՀՀ տարածքում չկան նման փորձաքննություն կատարող կառույցներ, որոնք կարող են եզրակացություն տալ ապահովելով հրավերի բնութագրով նշված բոլոր կետերը, ապա տեղեկացնում ենք, որ մրցույթի հրավերով սահմանվել է հետևյալը.

«Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ աառաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:

Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից»:

Այսինքն, Մասնակիցը իր կողմից առաջարկվող ապրանքին վերաբերող EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատների օրինակները, ինչպես նաև պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս քան 4 հատ ապրանքանմուշը, իր միջոցների հաշվին պետք է ենթարկի փորձաքննություն իրականացնող Հայաստանի Հանրապետությունում գործող պետական մասնագիտացված որևէ կառույցի փորձաքննության՝ մրցույթով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով, որը պետք է իրականացվի այդ կառույցի տեխնիկական հնարավորությունների և հագեցվածության շրջանակներում:

Սույն մասով պատվիրատուի կողմից նույնպես տրվել է համապատասխան պարզաբանում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ բողոքաբերի կողմից որպես ապացույց ներկայացված «ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացության «Ծանոթություն» պարբերությամբ նշվել է, որ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ»

ՍՊԸ-ի կողմից EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատները չեն տրամադրվել, որի արդյունքում գտնում ենք, որ հնարավոր չի եղել պարզելու հետազոտելի օբյեկտի մի շարք ցուցանիշներ:

Ինչ վերաբերում է, որ հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին, ապա տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի, իսկ նշված գնման ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել թվով 3 մասնակից, ինչը հստակ վկայում է, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան և չի սահմանափակել որևէ մասնակցի գնման ընթացակարգի մասնակցությունը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է հաշվի առնելով, որ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն բողոքը ժամանակի ձգման միտում է ենթադրում, ինչի հետևանքով Երևան քաղաքում կարող է էապես վատթարանալ սանիտարական վիճակը, ուստի, կարևորելով գնման առարկայի ձեռքբերումը, բողոքի քննությունն իրականացնել արագացված կարգով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.05.2020թ.՝ ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Մրցույթ):

2. Մրցույթի հրավերով նախատեսվել է Կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների տեխնիկական բնութագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետարանի՝ 29.04.2020թ. թիվ 02/61-37914h գրությունը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը

ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով բաց մրցույթ:

Մրցույթի հրավերով նախատեսվել է Կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ծավալը	1,0 – 1,1 մ^3
Երկարությունը մմ	1375 +/- 5%
Խորությունը, մմ	1075 +/-5%
Բարձրությունը, մմ	1360 +/-5%
Քաշը, կգ	ոչ պակաս 45
Բեռնափարողությունը, կգ	ոչ պակաս 450
Գույնը	մուգ կանաչ
Անիվների տրամագիծը՝	200մմ

Կոնտեյների նկարագրությունը

Նյութը՝ բարձր խտայնության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն, համաձայն՝ EN 840 միջազգային ստանդարտի: Աղբարկղը տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության - 200 մմ տրամագծով: Անվադողերը /անիվները/ պետք է ունենան փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ:

Աղբարկղը պետք է լինի.

- Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից.
- դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց.
- ճկուն.

- Հրդեհակայուն /չբոցավառվող/
- հարվածակայուն.

<u>Տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան:</u>

Վերևի մասում պետք է ունենա ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող կափարիչ, իսկ կողքերի մասում աղբատար մեքենայի միջոցով բարձրացման և բեռնաթափման հնարավորություն, որոնք ամրացված են կաղապարին մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Աղբարկղի աջ և ձախ կողմերում պետք է լինեն երուական բռնակներ:

Աղբարկղերը պետք է ունենան համարակալում, որը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ և ծխախոտը աղբարկղ գցելն արգելող զգուշացում:

Առաջարկվող ապրանքները պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:

<u>Բեռնման եղանակը</u>

Հետևից բեռնաթափմամբ աղբատարների համար

<u>Երաշխիքային ժամկետ</u>

Կենցաղային թափոնների կոնտեյների՝ ներառյալ բաղադրիչների համար - ոչ պակաս քան մեկ տարի:

Առաջարկում ենք կոնտեյների նմուշը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

- ***Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:***

Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:

- Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին,
- Պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:
- Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:
- Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տնօրենը և ներկայացուցիչը ներկայացված բողոքով, ինչպես նաև ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստի ընթացքում հայտնել են, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրում պահանջ է դրված, որ գնման առարկան՝ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներները, պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատները և համապատասխանեն վերջիններիս: Բեռնատարողությունը նշված է ոչ պակաս 450կգ, մինչդեռ համաձայն EN 840 սերտիֆիկատի՝ բեռնատարողությունը ֆիքսված 440կգ է, ուստի արդեն իսկ բնութագրին չի կարող համապատասխանել:

Միաժամանակ «Գավառտրանս» ՍՊԸ-ն, ով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ներգրավվել է ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքով որպես երրորդ կողմ, նիստի ընթացքում պնդել է ներկայացված դիրքորոշումը՝ խնդրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ամբողջությամբ մերժել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ հայտնելով, որ համաձայն EN 840 ստանդարտի՝ 1000 և 1100 լիտր ծավալային տարողունակություն ունեցող աղբարկղերի նվազագույն բեռնատարողությունը պետք է կազմի համապատասխանաբար 400կգ և 440կգ: Ավելացնելով, որ Տեխնիկական բնութագրով մի քանի ստանդարտի համապատասխանության պահանջ է ներկայացված և դրանք չեն կարող դիտարկվել առանձին, քանի որ դրանց համակցությունն ապահովելու դեպքում միայն կարելի է եզրակացնել ապրանքի համապատասխան որակի առկայության մասին:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները նիստի ընթացքում հայտնել են, որ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ վերջինիս կողմից որևէ հիմնավորում չի ներկայացվել այն մասին, որ EN 840 սերտիֆիկատը տրվում է միայն 440 կգ ապրանքի համար:

Միաժամանակ հայտնելով, որ Երևանի քաղաքապետարանի կողմից մինչև գնման ընթացակարգի հայտարարումը համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել տարբեր արտադրողների կողմից առաջարկվող ապրանքատեսակի բնութագրերի վերաբերյալ, որոնց արդյունքում պարզվել է, որ բազմաթիվ են EN 840 սերտիֆիկատին համապատասխանող, սակայն 450 կիլոգրամից բարձր բեռնատարողություն ունեցող ապրանքները:

Այսպիսով՝ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Միաժամանակ նույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց **հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների** և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ամփոփելով վերը նշված փաստերը և համադրելով դրանք գործում առկա նյութերի հետ՝ արձանագրում եմ հետևյալը.

ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12 ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրում գնման առարկայի՝ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների, բեռնատարողությունը նշված է ոչ պակաս 450 կգ, միաժամանակ նշված են հետևյալ պահանջները՝ «պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատները և

համապատասխանեն վերջիններիս», այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ համաձայն EN 840 սերտիֆիկատի՝ շարժական 4 անիվ ունեցող աղբարկղերը լինում են 1000-1300լ և 1300-1700լ, միաժամանակ նշված է, որ 1100 լիտր ծավալային տարողունակություն ունեցող աղբարկղերի նվազագույն բեռնատարողությունը պետք է կազմի համապատասխանաբար 440կգ, այսպիսով՝ գտնում եմ, որ նման պայմաններում բողոքաբերի այն պնդումը, որ EN 840 սերտիֆիկատը տրվում է միայն 440 կգ ապրանքի համար հիմնավորված չէ, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն կարող էր սահմանել գնման առարկայի՝ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների համար բեռնատարողություն ոչ պակաս 450կգ՝ EN 840 ստանդարտով սահմանված նվազագույն շեմը գերազանցող չափանիշ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի հետևյալ դիտարկումներին՝ պոլիէթիլենային կոնստրուկցիան չի կարող լինել հրդեհակայուն, իսկ հարվածային պահանջի վերաբերյալ նշված չէ հարվածի ուժգնության չափը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ procurement.am պաշտոնական տեղեկագրում առկա գնահատող հանձնաժողովի՝ 2020 թվականի ապրիլի 8-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և procurement.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պարզաբանմամբ հստակորեն նշված է, որ եթե առաջարկվող ապրանքը արտադրվել է EN 840, RAL-GZ և ISO 9001 ստանդարտներին համապատասխան և սերտիֆիկատները տրվել են առաջարկվող ապրանքի համար, ինչպես պահանջվում է հրավերով, ապա այն ներառում է բնութագրում նշված չափանիշները:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն դիտարկմանը, որ Տեխնիկական բնութագրով սահմանված փորձաքննության պահանջի և եզրակացության պահանջի վերաբերյալ կետը չի կարող պահպանվել, քանի որ ՀՀ-ի տարածքում չկան նման փորձաքննություն կատարող կառույցներ, որոնք կարող են եզրակացություն տալ՝ ապահովելով հրավերի բնութագրով նշված բոլոր կետերը, ապա այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Տեխնիկական բնութագրով սահմանված է հետևյալ պահանջը.

Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս <u>4 հատ ապրանքանմուշ</u> իր միջոցների հաշվին <u>պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության</u> և Պատվիրատուին <u>ներկայացնի</u>

<u>փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:</u>

<u>Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:</u>

Այսպիսով՝ Պատվիրատուն, սահմանելով փորձաքննության և եզրակացության վերաբերյալ պահանջները, այնուհետև երկրորդ պարբերությամբ բացառության կարգով սահմանել է երեք պահանջ, որոնց չպահպանման դեպքում նոր միայն Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, այն է՝

- ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը,
- առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը,
- եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին:

Այսինքն՝ պարտադիր պահանջ, որ պետք է եզրակացություն տալ՝ ապահովելով հրավերի բնութագրով նշված բոլոր կետերը, առկա չէ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 23.04.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/6039-2020 գրությամբ դիմել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին՝ հայտնելու՝ արդյոք անհրաժեշտության դեպքում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կարող է իրականացվել կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների փորձաքննություն՝ հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ և տրամադրվի համապատասխան փորձագիտական եզրակացություն, թե ոչ:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Կազմակերպություն) 27.04.2020թ. թիվ 05/205 գրությամբ հայտնել է, որ նշված հարցերից որոշների պարզումը Կազմակերպությունում հնարավոր է

իրականացնել ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության միջոցով՝ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման հիման վրա համապատասխան նմուշը/ները/, տեխնիկական կանոնակարգերը, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերը, սերտիֆիկատները, պետական ստանդարտները հայերեն լեզվով փորձաքննությանը ներկայացնելու, ինչպես նաև փորձաքննությանը տրամադրված նմուշների մասնակի վնասման թույլտվության առկայության դեպքում: Միաժամանակ հայտնել է, որ համալիր փորձաքննությամբ հնարավոր չի լինելու պարզել, թե «Բեռնատարողության, ոչ պակաս 450կգ», «Աղբարկղը պետք է լինի կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից, դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներից, ճկուն, հրդեհակայուն /չբոցավառվող/, հարվածակայուն», «Երաշխիքային ժամկետ» պարամետրերը համապատասխանում են տեխնիկական բնութագրին, թե ոչ՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում դրանց պարզման համար անհրաժեշտ հետազոտական հնարավորությունների բացակայության պատճառով:

Միաժամանակ նշել է, որ վերը նշված փաստաթղթերը փորձաքննությանը չտրամադրելու դեպքում փորձաքննությանը տրամադրված նմուշների փորձագիտական հետազոտությամբ հնարավոր կլինի պարզել.

Տեխնիկական բնութագրում նշված ապրանքի ծավալի, երկարության, խորության, բարձրության, քաշի, անիվների տրամագծի, կոնտեյների նյութի տեսակի, աղբարկղի անիվների քանակի, կաղապարի հետ ամրացմանն կոնստրուկցիայի նյութի, անիվների նյութի և գույնի, անվադողերի նյութի, տրամագծի, փոխարինման հնարավորության, անիվների արգելակման հնարավորության և պտտման կոնստրուկցիայի, կափարիչի ծխնիների քանակի, բարձրացման և բեռնաթափման հնարավորության, կաղապարին միացման կոնստրուկցիայի նյութի, բռնակների քանակների, վրայի գրառումների համապատասխանությունը ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Միաժամանակ արձանագրում եմ, որ 04.05.2020թ.՝ ժամը 10:35-ին, կայացած ԳԲՔԱ-ՆԳ-2020/37 բողոքի քննության նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչները փորձաքննության պահանջի և եզրակացության պահանջի մասով հայտնել են, որ հրավերի սույն պահանջի մասով Պատվիրատուի կողմից տրվել է համապատասխան պարզաբանում, որը հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 3-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և procurement.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պարզաբանմամբ հստակորեն նշված է, որ ՀՀ-ում գործող պետական մասնագիտացված որևէ կառույցի կողմից առաջարկվող ապրանքի վերաբերյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն կարող է տրվել ***վերջինիս տեխնիկական հնարավորությունների և հագեցվածության շրջանակներում***:

Վերը նշվածից ևս հստակ է դառնում, որ պարտադիր պահանջ, որ պետք է եզրակացություն տալ՝ ապահովելով հրավերի բնութագրով նշված բոլոր կետերը, առկա չէ:

Այսպիսով՝ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. ***Մասնակիցն իրավունք ունի*** հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր ***պահանջելու հրավերի պարզաբանում***: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. ***Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում***՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ մի քանի մասնակիցներ պահանջել են պարզաբանումներ, որոնց պատասխանները սպառիչ չեն և չի կատարվել բնութագրի փոփոխություն և հստակեցում, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ չկա որևէ իրավական հիմնավորում՝ հրավերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելուց հետո տվյալ հրավերում փոփոխություն կատարելու պարտադիր պահանջի համար:

Ընդ որում՝ գտնում եմ, որ բողոքաբերի կողմից բողոքով բարձրացված հարցերի պատասխանները սպառիչ պարզաբանված են Պատվիրատուի կողմից և Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հրապարակված են պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է՝ պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի,

աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ՝ ուղղված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Դրա հետ մեկտեղ, ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Դրա հետ մեկտեղ՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսրությամբ սահմանված պահանջները, և Մրցույթի տեխնիկական բնութագիրը չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Ուստի, նման պայմաններում գտնում եմ, որ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ. ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**